

ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՍՓԻՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՁԱՆ

(2000-ական թռւականներ)

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչու-թեամբ Մերձատր Արեւելքում սկզբնաորում իրարայաջորդ ահաբեկչական ատերիչ պատերազմները, քաղաքացիական բախումները, միանման սցենարով իրականացում յեղաշրջումներն իրենց անշրջելի հետեւանքներն են ունեցել եւ շարունակելու են ունենալ նաեւ տեղի հայ համայնքների վրայ [Իրաք (2003 թ., մարտի 20 – 2007 թ., մայիս, 2008 թ. մինչեւ օրս), Եգիպտոս (2011 թ., յունուարի 25 – 2013 թ., յուլիսի 3), Սիրիա (2011 թ., մարտի 15-ից մինչեւ օրս), Իսրայել (2023 թ., հոկտեմբերի 6-ից մինչեւ օրս)]: Հայկական համայնքներ, որոնք մեծապէս ստուարացել էին Առաջին աշխարհամարտի ընթացքում հայութեան նկատմամբ գործադրուած ցեղասպանութեան հետեւանքով փրկուած հայերի այդ երկրներում ապաստան գտնելով:

Մական Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում իրագործուած Հայոց ցեղասպանութիւնից 100 տարի անց, բոլորովին վերջերս՝ 2000 թուականներին, տեղի է ունենում Մերձատր Արեւելքի հայկական «Մայր գաղութներից» քրիստոնեաների ամէնից զանգուածային արտահոսքը միջազգային ահաբեկիչների կողմից սանձազերծուած ռազմական գործողութիւնների, սպանդի ու ատերաժութիւնների հետեւանքով:

ՈԱՁՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Այսպէս, թէն Իրաքում հայերը «պատմականօրէն սակաւաթիւ համայնք» էին (1981 թ. նրանց թիւը կազմել է շուրջ 12.000), այդուհանդերձ, 2003 թ. ԱՄՆ-ի եւ Մեծն Բրիտանիայի կողմից Իրաքի վրայ յարձակման հետեւանքով Իրաքի հայ համայնքը կրել է զգալի մարդկային եւ նիւթական վնասներ: 2003-2009 թթ. ընթացքում սպանուել է շուրջ 45 իրաքահայ, առեւանգուել՝ 38-ը:



Առանց յարանուանական խտրութեան կողոպտուել, ռմբահարուել ու ատերաժութիւնների են ենթարկուել Քիրքուքի, Պասրայի, Պաղտատի, Մոսուլի հայկական ակումբները, եկեղեցիները, վարժարանները, հայ համայնքին պատկանող միւս կառոյցները, ինչպէս նաեւ հայերի տներն ու սեփականութիւնները: Հեռանալով Իրաքից՝ հայերն ապաստան են գտել հարեւան Սիրիայում, Յորդանանում, արեւմտքի երկրներում, ինչպէս նաեւ՝ Հայաստանում: Ընդհանուր առմամբ, Հայաստան է ժամանել շուրջ 2.000 իրաքահայ:

Շուտով, 2011 թ. մարտին ԱՄՆ-ի հովանաւորութեամբ եւ ՆԱԹՕ-ի անդամ միւս երկրների գործակցութեամբ միջազգային ահաբեկիչների ներխուժումը Սիրիա սպառնալիք է ստեղծել տեղի 80.000 հայերի համար՝ պատճառ դառնալով երկրից նրանց զանգուածաբար արտագաղթի սկզբնաորմանը: 2012-2018 թթ. աւելի քան 22.000 սիրիահայ է ներգաղթել Հայաստան: Այդուհանդերձ, շատերը նախընտրել են ժամանակաւոր կամ մշտական կարգավիճակով մեկնել այլ երկրներ (Լիբանան, Թուրքիա, Յորդանան, Միացեալ Արաբական Էմիրութիւններ, ԱՄՆ, Գանատա, Շուէտ, Աւստրալիա եւ այլուր):

Սիրիայում սանձազերծուած պատերազմական թէժ գործողութիւնների ողջ ընթացքում եւ հետագայում հայերը, տեղի բնակչութեան, ինչպէս նաեւ այլէթնիկ, մասնաւորապէս, քրիստոնեայ խմբերի հետ միասին, կրել են թէ՛ մարդկային ու նիւթական զգալի կորուստներ եւ թէ՛ ֆիզիքական ու բարոյական անասելի զրկանքներ:

Ահաբեկչական խմբաւորումների զինեալները սպաննել, առեւանգել, կտտանքների են ենթարկել նաեւ Սիրիայի հայ ազգաբնակչութիւնը: Նրանք նպատակադրուած թիրախաւորել են, մասնաւորապէս, սիրիահայ համայնքի հոգեւոր, կրթական ու մշակութային կեդրոնները: Աւերուել, թալանուել, պղծուել ու հրկիզուել են համայնքային գրեթէ բոլոր կառոյցները՝ եկեղեցիները, գերեզմանատները, դպրոցները, համայնքային եւ մշակութային օջախներն ու ակումբները, ազգապատկան շինութիւնները:

2011-2017 թթ. Սիրիայի պատերազմի հետեւանքով զոհուել է աւելի քան 225 հայ, որոնց մէջ եղել են ինչպէս սիրիական բանակի զինուորներ, այնպէս եւ քաղաքացիական բնակչութիւն, ներառեալ՝ կանայք, երեխաներ, ծերեր, որոնք ռմբահարումների զոհ են գնացել: Հայ համայնքն ունեցել է հարիւրաւոր վիրաւորներ ու հաշմանդան դարձածներ: Անհետ կորած է համարուել 10-ը:

ՔՆԱՐԻԿ ՄՐԱԳԵԱՆ
Պատմական գիտութիւնների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Պատերազմի պատճառով սկսուած արտագաղթի, ինչպէս նաեւ տուած զոհերի հետեւանքով հայ համայնքը շեշտակի նօսրացել է. 80.000 հայից մնացել է շուրջ 10.000-ը: Նօսրացել կամ ընդհանրապէս հայաթափուել են երբեմնի հայաշատ քաղաքները:



Տեղացի բնակչութեան մնան հայերին եւս թալանել են, առեւանգել, սառը զէնքով սպառնացել, նսեմացրել, ֆիզիքական եւ հոգեկան տանջանքների ու կտտանքների ենթարկել, իսկ միւսները ռմբահարումների զոհ են դարձել:

Իսլամական ահաբեկիչները տեղացի քրիստոնեաներին առաջարկել են կրուել գործող իշխանութեան դէմ: Չհամաձայնուելու դէպքում սպառնացել են, վիրաւորել, դաժանօրէն ծեծել, իսկ հայերից, որպէս բարեկեցիկ համայնքի ներկայացուցիչներ, նաեւ հսկայական փրկագին են պահանջել:

Հաշուի առնելով սիրիական պատերազմի ընթացքում հայերին բաժին հասած դաժան փորձառութիւնները՝ ֆիզիքական ու բարոյաանոգեբանական զրկանքները (առեւանգում, հարցաքննութիւն, նսեմացում, հայիոյանք, ծեծ, կտտանքներ, խոշտանգում, տաժանակիր աշխատանք, Ղուրանի սերտողութիւն, անձնական իրերի յափշտակում, փրկագնի պահանջ եւ այլն), առանձին դէպքերում զոյատեւման անհրաժեշտութիւնից դրդուած նրանք նոյնիսկ ինքնական ընդունել են իսլամ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԱՂԵՏՆԵՐ

Պատերազմական գործողութիւններից բացի, մերձատրարեւելեան սփիւռքի մեր համայնքներն ու հայրենակիցները բախուել են նաեւ տնտեսական աղէտների հետ, որոնք օրակարգային են դարձրել հայրենադարձուելու հարցը:

Այսպէս, մերձատրարեւելեան հայաշատ Լիբանանն իր աշխարհագրական դիրքով, բազմամեթնիկ եւ այլադաւան կառուցուածքով եւս մշտապէս եղել է Արեւմտեան ուժերի թիրախում: Քաղաքացիական պատերազմի (1975 թ. ապրիլի 13 – 1990 թ. հոկտեմբերի 13) ընթացքում եւ յետոյ, դառնալով զինեալ պառակտիչ հակամարտութիւնների ու տեւական արիւնալի բախումների թիրախ, երկիրը կրել է մարդկային, սոցիալ-տնտեսական հսկայական կորուստներ՝ պատճառ դառնալով այդտեղից նաեւ հայերի մինչեւ օրս շարունակուող արտագաղթի:



Երկրին հասցուած վերջին խոշոր հարուածը 2020 թ. օգոստոսի 4-ի գիշերը մայրաքաղաք Պէյրութի նաւահանգստում 33 վայրկեանի տարբերութեամբ տեղի ունեցած տեխնոգեն երկու հզօր պայթիւններն էին, որոնց հետեւանքով մթնոլորտ էր արտանետուել 2.750 թոննա ամոնիումի սելիտրա (նիտրատ)

ԹՈՂ ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԼՌՈՒԹԻՒՆԸ... ԴԱՌՆԱՅ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՊԱՅՏԻԿ ԳԱԼԱՅՑԵԱՆ

34 տարի առաջ Հայաստանի եւ Սփիւռքի համայն հայութիւնը ողջունեց մեր Հայրենիքի Գ. Անկախութեան պայծառ արշալոյսը, որուն շնորհիւ մեր Հայրենիքը հռչակուեցաւ անկախ պետութիւն: Դարերու ընթացքին իր անկախութիւնը բազմաթիւ անգամներ կորսնցուցած ժողովուրդը ի կատար ածեց իր դարատուր երազանքը՝ յանուն գալիք դարերուն եւ ամէն արշալոյսին Հայրենիքի թէ՛ Սփիւռքի տարածքին գտնուող իւրաքանչիւր հայորդի հպարտօրէն երգեց մեր ազգային հիմնը, թէկուզ ան հիմնուած ըլլայ «խաղաղի աղջկայ երգը» բանաստեղծութեան վրայ:



Դէպի Շուշի Ղազանչեցուց եկեղեցի

նանց պատերազմի նախօրեակը յիշեցնող պատկեր մը ուրուագծուած էր հայերէն երկնակամարին տակ: Ուստի Վ. Սարգսեան կոչ ըրաւ հայ տղամարդոց կամատրաստութիւնը զինուած ուժերուն, որպէսզի կարենան ետ մղել ատրպէյճանական խուժանը: Իր ելոյթին մէջ ան ըսաւ. «Իւրաքանչիւր շրջանէն 10-15 հոգի եթէ միայն կարենանք մէկտեղել հին տղաներէն, փորձառուներէն, որոնք պիտի երթան կռուելու ամենադժուար հատուածներուն մէջ: Եթէ մենք վաղը 500 հոգինոց մահապարտներով յաջողեցանք ստեղծել մեր գումարտակը, ուրեմն մենք դեռ կանգ եւ յաղթելու ենք: Իսկ եթէ չյաղթեցինք, այն ժամանակ ես կը համարեմ, որ իսկապէս իմ հրաժարականը տալու ժամանակը եկած է»:

Այս ոգիով է որ կազմուեցաւ Հայոց բանակը, որ պատուով կերտեց Արցախեան յաղթանակը: Վասնզի պատուով մեռնողը փառքով կ'ապրի առյաւէտ:

Եւ այդպիսով կազմաւորուած Հայոց բանակի սիրտը սկսաւ տրոփել համազգային սիրով, որուն ջերմութեամբ է որ մասնակից դարձաւ Արցախեան յաջողական պատերազմներուն, սակայն դժբախտաբար հրամանատար դիրքերու վրայ զօրավար Վ. Սարգսեանի ոգին չէր թեւածեր..., հետեւաբար վախճանը եղաւ ոչ հայավայել:



Դէպի սահմանագիծ - հայ բանակայիններու առաջնորդութեամբ

Նորանկախ Հայաստանը ծնունդ առաւ ամենաբարդ պատմաքաղաքական հանգամանքներու բերումով, ի մասնաւորի երբ դրացի հանրապետութեան կողմէ սանձազերծուած բացայայտ պատերազմի ազդանշաններ կ'արձակուէին: Մինչ մէկ կողմէ երկրաշարժի, բռնազրաւուած հողերու, բռնի տեղահանուածներու, շրջափակման ու պատերազմի ծանրագոյն բեռին տակ Հայաստան կը տուայտեր, սակայն միւս կողմէ կը յանդգներ յաղթահարել իր դէմ ցցուող անյաղթահարելի թուացող մարտահրաւերները, շնորհիւ հայու անկոտորում կամքին: Հայ ազատամարտիկները կը կռուէին ոչ միայն իրենց զենքերով, այլեւ մտքով ու հաւատով, եւ վերջապէս հայու անընկճելի ոգով, համայն Հայ աշխարհին ապացուցելով, թէ Հայ զինուորը ոչ միայն ամուր է իր հոգիով, այլեւ քաջարի, իսկ վտանգի պահուն՝ առնական:

Պատմական ակնյայտ իրողութիւն է, թէ ժողովուրդներու անկախութիւնը ոչ թէ կը շնորհուի, այլ կը նուաճուի ազատագրական պայքարի, նուիրեալ հերոսներու, անձնագոյի ազատամարտիկներու եւ կամաւորական ջոկատներու արեան գնով, որոնցմէ շատեր իրենց կեանքը նուիրաբերեցին մեր նոր պետականութեան վերածնունդի գոհաստեղանին:

Յատենի Ռազմական եւ քաղաքական գործիչ Վազգէն Սարգսեան, իր հասարակական ու քաղաքական գործունէութիւնը սկսած էր 1988 թուականին, Արցախեան շարժման ժամանակ, որպէս զերագոյն նպատակ ունենելով Լեռնային Ղարաբաղը միացնել Մայր Հայրենիքին: Չոր տեղ չէր որ 27 Հոկտեմբեր 1999-ին, իր համախոհ 7 պատգամաւորներուն հետ անարգ ոճիրին գոհ գնաց, այն ան Հայաստանի Ազգային Ժողովի սրահին մէջ:

1992-ին, երբ Արցախի իրավիճակը օրհասական էր հայկական զինուած ուժերու համար, հայկական կանոնատուր բանակ գոյութիւն չունէր, Վարդա-

Համարեա մեր ազգային պատմութեան հոլովոյթը կը վկայէ թէ մեր ազգային բանակը ընդմիջտ դիմագրուած է իր դէմ ցցուած մարտահրաւերները, շնորհիւ մեր բանիմաց, զգօն ու անձնագոհ հրամանատարներուն, որոնք ամէն ջանք ի գործ դրած են ոչ միայն կատարելագործելու եւ հզօրացնելու համար զինուած ուժերը, այլեւ անոնց շնորհիւ ծնունդ տալու Հանրապետութեան երիտասարդական ամենամեծ կառոյցին՝ Հայոց բանակին:

Այսօր 34 տարի ետք, մենք պարտաւորութիւնը ունինք ակնածանքով ողջունելու անկախութեան նախօրէին ու անոր յաջորդող տարիներուն գոյացած այն երեւոյթը, երբ սփիւռքահայ բանակային պատասխանատուներ, ազատամարտիկներ, հայոց կորիւններ, արբեցած հայրենի հողի ազատագրութեան գաղափարներով, ոգեվառ զգացումներով հասած էին Հայրենիք, իրենց մասնակցութիւնը բերելու եւ իրենց գիտելիքները ի սպաս դնելու Հայոց բանակին ազատագրական պայքարին. Հաւատալով, որ միայն այդ կերպ կարելի պիտի ըլլար անոր շարքերը դարձնելու կուռ ու անասան:

Փառք Հայաստանի Հանրապետութիւնը բարգաւաճեցնող եւ հզօրացնող հայ ժողովուրդին:

Յատերժ փառք Հայրենիքի սիրոյն նահատակուած նուիրեալ բանակայիններուն:

Իր ազգային առաքելութեան ճանապարհին հայու հոգին բարձր պատուանդանի վրայ գետեղող, աննահանջ հաւատքով «Հայրենեաց պաշտպանի» վեհ կոչումը կրող հայ զինուորին:

Փառք ու պատիւ բոլորիս հպարտութեան առարկան՝ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻՆ:

Պէյրութ

Ուղիղ հեռախօսակապով եւ համացանցային միացմամբ՝

ԹՐԲԱԿԱՆ, ԻՍՐԱՅԷԼԵԱՆ, ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀՐԱՄԱՅՆԵՐՈՎ, ԱՆՕՂԱԶՈՒ ՍԱՐՔԵՐՈՎ, ՌԱԶՄԱԿԱՆ ԻՆՔՆԱԹԻՈՆԵՐՈՎ ԻՆՏԵՆՏԻՎԵԱՆ ԵՎԹ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՐԷԿԻ ԴԱՇԻՃՆԵՐԸ ԲԱԺԱՆ-ԲԱԺԱՆ ԸՐԻՆ ՀՍԿԱՅԱԿԱՆ ՍՈՒՐԻԱՆ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՀԱՏՈ ՍՈՍԿՈՑԵԱՆ

ՌԷՃԷՊ ԹԱՅԻՓ ԷՐՏՈՂԱՆ – Թուրքիոյ Հանրապետութեան նախագահ – Այն նահանգները, որոնք Հալէպ, Ըտլէպ, Ռաքքա կը կոչենք՝ կրնան դառնալ մեր նահանգները, ինչպէս օրինակ Այնթէպ, Հաքալ, Ուրֆա...

ՍԱԼԵՀ ՍՈՒՍԼԻՄ – Քրտական «Ժողովրդավարական Միութիւն» կուսակցութեան համա-նախագահ, ակնաւոր ղեկավար

– Մեր խնդիրը ճշմանի կառավարութեան հետ չէ միայն՝ այլ էրտոզանի արինախում վարձականներուն հետ, որոնք ինչպէս



մօտիկ անցեալին, հիմա ալ կոտորածներ սարքեցին եւ պատրաստ են բնաջնջել բոլորը...»:

ԲԵՆԻԱՄԻՆ ՆԱԹԱՆԻԱԶՈՒ – Իսրայէլի վարչապետ

– Մենք կարողացանք քանի մը ժամուան մէջ քարուքանդ ընել Սուրիոյ բանակին ամբողջ հզօրութիւնը, հրթիռային պահեստները, ռազմական ինքնաթիռներուն 80 տոկոսը: Մեր նպատակն էր որ հետագայ տասնեակ տարիներու ընթացքին ոչ ոք կարողանայ Սուրիայէն մեր վրան յարձակիլ: Կողմի բարձրունքները գրաւեցինք ու երբեք դուրս պիտի չգանք այն տարածքներէն:

(Շար.ը տեսնել էջ 12)

ՆՒՒ ԵՈՐՔԻ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆՆԵՐԷՆ

ՀՐԱՆԴ ԿԻԼԵԱՆ

ՏԻՐԱՆԱԿԵՐՏ, ԴԵԿՏԵՄԵՐ 15, 1948 - ՆՒՒ ՃՐՁԻ, ՅՈՒՆԻՍԿՈՒՄ 13, 2025

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին



ՅԱԿՈՒՐ ՎԱՐԴԻՎԱՆԵԱՆ

Անցնող 30 տարիներու ընթացքին, ցեղասպանութեան յիշատակումը, այս մեծ ոստանին մէջ առանց կազմակերպութեամբը Հրանդ Կիլեանի, գրեթէ անհնար կը դառնար: Թայմզ Հրապարակի հաւաքները, ամէն տարի իր ուշադրութեան կը հրաւիրէ ամէն Ապրիլ 24-ին, միւ ետքքցիներն ու տեղական մամուլը իրենց ներկայութեամբ ու խօսքով հանդէս կու գան Նիւ Եորքի ու Նիւ Դըրզի քաղաքական ծանօթ դէմքեր՝ ծերակուտականներ ու գոնկրէսականներ, որոնք այդ օր կը վերանորոգեն իրենց խոստումը Գոնկրէսէն ներս տէր կանգնելու մեր արդար դատին: Ու այսպիսով Ամերիկայի Օրէնդիր Մարմինը ճանչցաւ մեր մեծ ողբերգութեան եղելութիւնը թուրք ժողովուրդին ու Թուրք պետութեան գործադրութեամբ:

Ամիսներու կազմակերպական աշխատանք պահանջող այդ եզակի հաւաքը կրցաւ ի մի հաւաքել նաեւ գաղութին զանազան կազմակերպութիւնները: Երկար շրջան մը ազգային քաղաքական կազմակերպութեան մը ենթակայ



Նիւ Եորքի Թայմզ Հրապարակի յիշատակումի հաւաքը

մարմիններ չէին մասնակցիր այդ հաւաքին, այնուհետեւ անոնք եւս սկսան մաս կազմել Վարդանանց Ասպետներու եղբայրակցութեան կազմակերպած միջոցառման: Այժմ կը յիշենք գաղութին ծանօթ ազգայիններէն Սեմ Ազատեանի նախաձեռնութեամբ ծնունդ առած անդրանիկ հաւաքը որ դարձաւ բողոքի կողմէ ընդունուած միջոցառում եւ ժամադրաւայրը ազգային պահանջատիրութեան: Հրանդ տասնամեակ մը գործակցելով Սեմին հետ, ի վերջոյ, անոր մահէն ետք ան ստանձնեց բոլոր պարտականութիւնները եւ արդէն կամաց-կամաց, իր կարգին երիտասարդ նոր ոյժեր հաւաքելով իր շուրջ ջանաց այդ թուականը միշտ ապահովուած պահել հայութեան համար:

Հրանդ ծնած է Տիգրանակերտ 1948-ին եւ փոխադրուած՝ Միացեալ Նահանգներ 1967-ին: Շրջանաւարտ է եղած Քոլինգ Գոլէճէն 1975-ին, ստանալով Պսակաւոր Արուեստից տիտղոսը հաշուապահութեան մէջ:



Տէր եւ Տիկին Հրանդ եւ Ռուայի Կիլեաններ

Առաջին օրէն սկսեալ ան յափըշտակուած խանդավառութեամբ մաս կազմած է մեր շրջանակի աշխատանքներուն, գործունէութեան: Հիմնադիր անդամներէն է Առաջնորդարանի թատերախումբին (1970) եւ Հայ-Ամերիկեան կրթական հիմնարկին (1976):

Կը միանայ Վարդանանց Ասպետներու «Վարդան Մամիկոնեան» օթեակին 1978-ին եւ այնուհետեւ մինչեւ օրս հաւատարմօրէն կը ծառայէ եղբայրակցութեան: 1984-ին նախաձեռնող խմբակին մաս կը կազմէ եւ յաջորդ տարի 1985-ին արդէն որպէս համաատենապետ՝ կը կազմակերպէ Թայմզ հրապարակի յիշատակի հանդիսութիւնը՝ նուիրուած Սեմ Եղեռնի 70-ամեակին:

ՌԱԿ-ի հրաւերով Զօրի Բալայեանի Նիւ Եորք ժամանման օրերուն 1986-ին, Հրանդ կը հանդիպի եւ մեծապէս կը տպաւորուի ու կ'ոգեւորուի անոր վարակիչ հայրենասիրութեամբ: Իսկ Մարտ 1988-ին մաս կը կազմէ Նիւ Եորքի ձեւաւորուող Վարաբաղ Կոմիտէի հիմնադրութեան, որ իր անսահման նիւթական օգնութիւններով թիկունք կը կանգնի Արցախի հերոսամարտի քաջարի մարտիկներուն: Բժշկական օգնութեամբ այս փերը կու գան վիրաւոր ծանօթ զինեալներ:

Վրայ կը հասնի Սպիտակի տխուր երկրաշարժը. հոս եւս Հրանդ մնայուն մասնակիցն է օգնութեան հիմնարկութիւններուն մէջ, ինչպէս «Հայաստանի Օգնութեան ֆոնտին, որուն գանձապահութիւնը կը վարէ 1995-2000 տարիներուն եւ նախաձեռնարկ կ'ըլլայ Գորիս-Ստեփանակերտ մայրուղիի շինութեան:

Հաւատարմով Թէքէեան Մշակութային Միութեան ազգանուէր առաքելութեան ան շրջան մը մաս կը կազմէ Նիւ Եորք-Նիւ Դըրզիի մասնաճիւղին վարչութեան եւ Հայաստանի Հանրապետութեան անկախացման երկու տարեդարձներու առթիւ՝ Սեպտեմբեր 1996 եւ 2006 թուականներուն փառայել կերպով կը կազմակերպէ Հայաստանի երրորդ հանրապետութեան տարեդարձը:

Այս ամէնը չեն բաւեր կարծէք երկար շրջան մը ան կ'ըլլայ Պոլսահայերու Հայ Տան եւ Նորք 2 հիւանդանոցի օգնութեան յանձնախումբերուն ատենապետը: Ու դեռ 2001-ին Հայոց Քրիստոնէական հաւատքի ընդունման 1700-ամեակին առթիւ կը գլխաւորէ Ուալտորֆ Ասորիայի մէջ տեղի ունեցած հայրա-

պետական հանդիսատը ճաշկերոյթը: Եւ այս բոլոր ծառայութիւններուն որպէս վարձատրութիւն՝ Հրանդ 2010-ին կ'արժանանայ Ասպետներու «Տարուան Մարդը» գնահատագրին:

Իր լայն հետաքրքրութիւնը ցեղասպանութեան արխիւներու փրկութեան աշխատանքի զիւրէն ներս զինք կը մղեն Օսմանեան շրջանէն մնացած կալուածաբոլորներու ի մի բերման աշխատանքին: Ապա 2010-ին եւ 2015-ին ցեղասպանութեան իրողութեան հետ կապուած օտար արխիւներու պահպանման աշխատանքին:

Հակառակ Նիւ Դըրզի բնակութիւն հաստատած ըլլալուն, երբեք չմոռցաւ իր ծննդավայրն ու անոր հայկական միջավայրը եւ 2011-ին ձեռնարկեց Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցւոյ վերանորոգման աշխատանքներուն: Այս անգամ, իր արտասովոր ծառայութիւններուն համար 2012-ին Ամենայն Հայոց հայրապետը՝ Գարեգին Բ. շնորհեց հայրապետական կոնդակ, ինչպէս նաեւ շքանշաններու արժանացաւ Հայաստանի Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանի եւ Արցախի հանրապետութեան կողմէ իր կատարած զոհողութիւններուն որպէս վարձատրութիւն:



Շրջապատուած ազգային բարերարներով Մարգիս Պետեան, Հրանդ Կիլեան եւ Հերի Թոֆայեան



Հայաստանի վերանկայնութեան տարեդարձին ՀՀ դեսպան Զօհրայ Մնացականեան եւ միւ ետքքարակ ազգայիններով - Ս. Վարդան Մայր Տաճար

Վերջապէս կազմակերպեց կէս միլիոն տոլարի նուիրահաւաք՝ Վարդանանց Ասպետներու հիմնադրութեան հարկւրամեակին առթիւ ցեղասպանագէտ Դոկտ. Թաներ Արչամի, Կերկերեանի եւ Անտոնեանի արխիւներու աշխատանքին համար Գլխաւոր համալսարանէն ներս. աշխատանք մը որ տակաւին կը շարունակէ իր ծառայութիւնը բերել մեր արդար դատին:



Առաջնորդ Խաճակ Արք. Պարսամեանի եւ Պոլսայ պատրիարքական փոխանորդ Արամ Արք. Աբէշեան

Յօգնիլ չզիտցող մեր պատուական ընկերոջ կողքին լուռ կերպով իր մասնակցութիւնը կը բերէ Հրանդին կողակիցը՝ Ռուպին: Ան Լիբանանի Պագալեան բարեհամբաւ ու բարերար ընտանիքի հարազատ ծնունդն է եւ հայրը՝ Հայկի եւ Անոյձի, որոնք կը քալեն հօր ազգային բարեսիրական ճանապարհով:

Այսպէսով Հրանդ պիտի շարունակէ մնալ բոլորին կողմէ սիրուած ու յարգուած ազգայինը:

Կը մահանայ 13 Յունուար 2025-ին, Նիւ Դըրզիի մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Նիւ Դըրզի

Այնպես լուսավորեցե՛ք լոյս ձեր...

ՅՈՎԷԼ ՇՆՈՐՀՕՐԵԱՆ

Կը մարթեմ ձեզի փայլուն նոր տարի ու կը շնորհաւորեմ ձեր Սուրբ Ծնունդը:

2024-ը եւս եղաւ այնպիսի տարի մը, երբ երկինքը առաւել մթազնեցաւ: Աշխարհի ղեկավարները դեռ եւս բեւեռացան երկու խումբերու՝ բռնակալներ եւ անողնաշարներ: Բռնակալները աճեցան թիւով՝ ու դարձան աւելի անգութ ու բիրտ, բանտարկելով եւ սպանելով լրագրողներ, բժշկական անձնակազմեր եւ մարդասէրներ, ռմբակոծելով հիւանդանոցներ, դպրոցներ ու բնակավայրեր: Միեւնոյն ատեն, այսպէս կոչուած «ժողովրդավար» ղեկավարներէն ոմանք զէնք մատակարարեցին ոճրագործներուն, ուրիշներ ալ ամօրայի գործարքներ կնքեցին վառելիքի շուրջ, իսկ «Պիղատոսները» իրենց ձեռքերը լուսցին պատասխանատուութենէն՝ անտարբերութեամբ եւ դաւաճանութեամբ զոհաբերելով իրենց հաւատարիմ զինուորները:



Օրուան լուրերը լսելով, կը բարձրաձայնեմ, մէկ դար առաջ մաղձով արտասանուած ու դեռ հարկաւոր Միամանթօյի դառն աղօթքը. «Ով մարդկային արդարութիւն, թող ես թքնեմ քու ճակատիդ»:

Օրերը կ'անցնին եւ երկինքը աւելի կը մթազնի: Մարդկութիւնը կարծես կորսնցուցած է իր բարոյական կողմնացոյցը՝ դառնալով աւելի նիւթապաշտ ու եսակեդրոն: Բաժանում եւ անհանդուրժողութիւն կը տիրեն ամէն ազգի, հասարակութեան եւ խումբի մէջ, ուր մարդիկ «կը դաւաճանեն ու կ'ատեն զիրար»:

Մակայն, մինչ չարիքը կ'ուժգնանայ, բարեփոխման աւելի լայն ենթահող կը տեսնեմ ու նոր յոյսով կը լեցուիմ: Յիրաւի, որքան աշխարհը խաւարի, այնքան աւելի պայծառ կը փայլին մեր լոյսերը: Մենք կը կրենք Նարեկացիի եւ Շնորհալիի խոր ժառանգութիւնը՝ սիրոյ, խոնարհութեան եւ ծառայութեան մէջ արմատացած: Մեր առաքելութիւնն է մարմնաւորել այս արժեքները եւ ստեղծել խաղաղութեան ու կարեկցանքի օճախներ մեր շրջապատին մէջ:

Եւ երբ կը դիտեմ նիւթական արդիւնքներու համար մարդոց խելայեղ վագրը, գոհունակութիւն կը զգամ իմաստալից առաքելութեան մը մաս կազմելու համար: «DiasporArm»-ի ծիրէն ներս կը մասնակցինք զանազան արդիւնաւետ նախաձեռնութիւններու, ինչպիսին են՝ «Քարտեւագրման ծրագիր»-ը՝ բացայայտելու, համախմբելու եւ համադրելու հայ սփիւռքի ներուժը, «Հայկական համայնքներու հզօրացում»-ը՝ համայնքներու ընկերային, տնտեսական, կրթական եւ մշակութային կարիքները հոգալու, եւ «Արժեքներու փոխանցում»-ը՝ խթանելու այնպիսի ծրագիրներ, որոնք միտուած են հիմնական արժեքաւորութեան վերահաստատման եւ համայնքներու փոխակերպման:

Անձնական մակարդակի վրայ, յարատեւութեամբ կը պայքարիմ կամուրջներ հաստատելու՝ Հայաստանի եւ սփիւռքի միջեւ, կառավարութեան, եկեղեցոյ եւ հայորդիներու միջեւ, ամրապնդելու կապերը սփիւռքի տարբեր մարդասիրական կազմակերպութիւններու, նաեւ կրօնական կառոյցներու միջեւ: Կը յիշեցնեմ բոլորին, որ «մենք մէկ մարմնի անդամներ ենք», կոչուած խոնարհութեան եւ ծառայութեան, գործելու հետեւելով ուսուցումին՝ «Կառուցելու ձեռքերը մեր ամէն մէկը իր մասին աւելի բարձր համարում չունենայ, եւ ինչ որ պէտք է մտածել, խոհեմութեամբ մտածել: Իրարու հանդէպ գորովալից եղէք՝ եղբայրական սիրով. պատուելու մէջ զիրա՛ր գերադասեցէք: Փութազանութեան մէջ ծոյլ մի՛ ըլլաք. եռանդուն հոգիով ծառայեցէք: Որքան կարելի է ձեզի՛ խաղաղութիւն պահեցէք ամէն մարդու հետ»:

Թո՛ղ մեր լոյսը աւելի պայծառ փայլի 2025-ին: Շարունակե՛նք կրել մեզ միացնող մեր ժառանգութեան արժեքները՝ լուսավորելով ուրիշներու ճամբաները յոյսով եւ իմաստաւորումով:

Le Raincy, 06/01/2025

ԱՊՐԻԼ ԳՐԱՏՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ Է ԽՈՐԷՆ ԱՐԱՄՈՒՆԻ՝ «ՏԱՇՏԱՔԵՐԱՆՔ» ԳԻՐՔԸ

Կլենտէյլ, Գալիֆորնիա – Ապրիլ Գրատունը ներկայացնելու է հանդիպում եւ գրոյց հեղինակ Խորէն Արամունու հետ, իր նոր հրատարակուած պատմուածքների ժողովածու՝ «Տաշտաքերանք»ի առիթով՝ Հինգշաբթի, 13 Փետրուար, 2025, երեկոյեան ժամը 7:00-ին, Center for Armenian Arts հաստատութեան մէջ՝ 250 N. Orange St., Glendale, CA: Մասնակցելու են բանաստեղծ ու թարգմանիչ՝ Էդուարդ Հախվերդեանն ու Ռաֆֆի Մելքոնեանը: Մուտքը ազատ է:

Հանդիպում եւ գրոյց հեղինակի հետ՝
ԽՈՐԷՆ ԱՐԱՄՈՒՆԻ

Մասնակցողներ՝
**ԷՂՈՒԱՐԴ ՀԱՆՎԵՐԴՅԱՆ
ՌԱՖՖԻ ՄԵԼԵՈՆԵԱՆ**

ՅԻՆԳՇԱԲԹԻ, ՓԵՏՐՎԱՐ 13, 2025 7:00ին

Armenian Arts 250 N. Orange Street
Glendale, CA 91203

«Տաշտաքերանք» պատմուածքների այս ժողովածուն Խորէն Արամունուն նորը հումօրով ներծծուած, երբեմն էլ թախիծով պարուրուած, վաղ մանկութիւնից մինչեւ մեր օրերի (Իրան, Հայաստան եւ ԱՄՆ) յիշողութիւնների արձագանգն է:

Խորէն Արամունի (Քեշիշեանը) արձակագիր, դրամատուրգ եւ թարգմանիչ է: Ծնունդ է 1948 թ. Իրանում: Երկու տարի սովորել է Սպահանի համալսարանի հայագիտական բաժնում: 1969 թուականին հայրենադարձուել է: 1975 թուականին աւարտել է երեւանի Պետական Համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1980 թ. արտագաղթել է ԱՄՆ: Տպագրուել է ԱՄՆ-ի հայալեզու թերթերում եւ ամսագրերում: Համագործակցել է «Հայաստան» հեռուստահաղորդումներին: Հիմնադրել է «Այր-բեն» հրատարակչութիւնը: 1994 թուի. եղել է «Գարուն» Ամսագրի ներկայացուցիչը ԱՄՆ-ում: 1992 թ.



առաջին անգամ Հայաստանում լոյս է տեսել նրա «Յետմահու հարսանիք» պատմուածքների ժողովածուն: 2004 թուականից Հայաստանի Գրողների Միութեան անդամ է: 2014 թ. պարգեւատրուել է ՀՀ Սփիւռքի նախարարութեան «Ուիլիամ Մարոյեան» մետալով: 2018 թ. Իր գրական վաստակի համար արժանացել է ՀԳՄ-ի մետալին: Արժանացել է Գալիֆորնիայի սենատի, Լոս Անճելըսի գաւառի եւ տարբեր քաղաքների աւելի քան տասնըջորս պատուգրերի: Հրատարակել 18 անուն գիրք, նրա աւելի քան եօթ պիեսները բեմադրուել են թէ՛ Հայաստանում եւ թէ՛ նրա սահմաններից դուրս: ԱՄՆ-ի եւ Հայաստանի քաղաքացի է: Դեռ ողջ է...

Տեղեկութիւններու համար հեռաձայնել՝ Ապրիլ Գրատուն (818) 243-4112, noor@abrilbooks.com

ԱՌՆՕ ԵՐԷՑԵԱՆ

ԹՐՔԱԿԱՆ, ԻՍՐԱԵՆԵԱՆ, ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀՐԱՍԱՅՆԵՐՈՎ, ԱՆՕԴԱՉՈՒ ՍԱՐՔԵՐՈՎ...

(Շարունակում 5-րդ էջին)

ԼԷՅՍ ՄՈՒՖԹԻ – Մուրիազի հռչակատր դերասան, բեմադրիչ, մտատրական



«Միրելի եղբայր Ահմատ ըլ-Շարի (Ճոլանի), նախ կը շնորհատրեմ ձեր իրագործած ազատութեան համար պայքարին եւ յեղափոխութեան յաղթանակին համար: Մենք ուրախ ենք սակայն միաժամանակ՝ վախով լեցուն: Քեզմէ ու կողմնակիցներէդ կը խնդրենք, որ Իսլամական Պետութեան չվերածէք Սուրիան: Չեր կառավարութեան մէջ նորաստեղծ մշակոյթի նախարար չկայ...: Սուրիան հազարամեակներու մշակոյթ ունեցող երկիր է, ժողովուրդը կենք սիրող, արարող, ապագային հանդէպ միշտ յաւատնա: Իսլամական պետութիւն ստեղծելու պարագային՝ երկրէն փախուստ պիտի տայ մեր մտատրական, մշակոյթի եւ արուեստներու արարող սերունդը՝ երկիրը մխրճելով խաւարի մէջ»:

ԱՔՔԱՏ ՀԱՆՆԱ – Ատրական «Սուրբո» ռազմական ոստիկանութեան խօսնակ, «Սուրիական Դեմոկրատական Ուժեր»ու անդամ, Քամիշլի

«Կանխելով Քամիշլիի զինուորական միջազգային օդակայանին գրաւումը Թուրքիոյ վարձկաններուն կողմէ, մեր ուժերը, «Սուրիական Դեմոկրատական Ուժեր»ու գլխատրութեամբ, որուն շարքերէն կը կռուին քիւրտ, ասորի, արաբ, հայ, եգիպտացի ռազմիկներ՝ տէր դարձանք օդակայանին, որուն շրջապատը ռազմական էր Թուրքիոյ կողմէ...: Առաւել եւս, Քամիշլիի «Անվտանգութեան խաչմերուկ» կոչուած Սուրիական բանակի եւ հետախուզութեան կեդրոնները անցան մեր հսկողութեան տակ:

ՍԱԼՔԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ – Լրագրողուհի, գրող, մտատրական, մանկավարժ – Հալէպ:

«Բաւական մտահոգուած եւ անորոշ իրավիճակի մէջ յայտնուեցանք այս յեղափոխութեան առաջին օրէն: Սակայն նոր վարչակարգին անդամները ամէն ինչ ըրին որ ցոյց տան, թէ իրենք կը յարգեն քրիստոնէայ փոքրամասնութիւններուն իրաւունքները: Հիմա Հալէպը ամէնէն ապահով եւ հանգիստ քաղաքն է: Տեսնենք յետագայի զարգացումները»:

ԱՊՏԸԼ ՍԱԼԱՍ ԱՀՄԱՏ – Հիւսիս Արեւելեան ինքնավար մարզի քիւրտ գլխատր ներկայացուցիչ Լիբանանի մէջ:

«Վերջին քանի մը տարուան ընթացքին, Թուրքիոյ բռնապետ Էրտողան, աւելի քան 85 հազարանոց «յատուկ» բանակ պատրաստեց, կազմուած Սուրիոյ, Իրաքի, Կեդրոնական Ասիոյ, Չինաստանի Թիւրքմեն, Իւզբէք, Ղրղիզը, Ուշկուր ցեղախումբերէն զինուորագրուած վարձկաններէն, որոնք արդէն արհմարտի արհաւիրքներ կազմակերպած էին Սուրիոյ եւ Իրաքի տարածքին՝ Իսլամական Պետութեան շարքերէն: Այժմ այդ վարձկան բանակը իշխանութեան բերաւ տիրահռչակ Չարքանուի եւ Պաղատիի տեղակալ, «Ժողովրդավար»ի դիմակ հագած Ճոլանին, որ այժմ կը գործէ իր տէրերուն հրահանգներուն համաձայն: Էրտողան իր բանակին ոճրագործներով կը սպառնայ նաեւ Արեւմտեան Եւրոպային, ուր քանի մը անգամ ահաբեկչական գործողութիւններ կատարեցին մայրաքաղաքներուն մէջ: Իսկ 2020 թ.ին Ատրպէյձանի, Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի վրայ ռազմական զարման օրերուն՝ Լուիպէն «վարձակալուած» հարիւրաւոր քիւրքմեն վարձկաններ, Էրտողանի հրահանգով տեղափոխուեցան Պաքո, ապա ռազմաճակատներ, որոնց մասին օրը-օրին զգուշացուցած էին հայ ռազմական ղեկավարութիւնը...»:

ՖԱՅՍԱԼ ԷՄՔԷՇ – Պաղեստինցի մտատրական, համալսարանի դասախօս, յառաջդիմական գործիչ, 1948 թ. Իսրայէլեան բռնազրուած տարածքներէն

«Թրքական, իսրայէլեան, ամերիկեան հրասայելերու, անօդաչու սարքերու, ռազմական ինքնաթիռներու եւ հազարաւոր արհմարտու վարձկաններու միջոցաւ, Ասատի վարչակարգը տապալած Ճոլանի այժմ զբաղած է, թէ քանի՞ երկարամեայ բանտարկեալներ «անհետացած» են Սետնայայի թէ Մեզզէի բանտերուն մէջ, միաժամանակ հրկիզել տալով 40 տարի Սուրիան պահած-պահպանած նախագահ Հաֆէզ Ասատի շիրիմը՝ Քարտահայի մէջ: Մինդ անդին, Իսրայէլեան բանակը երկրորդ օրն իսկ գրաւեց 200 քառ. քմ. սուրիական տարածք, 40 տարուան ամբարում զենքերն ու հրթիռները, ռազմական պահեստները քարոքանդ ըրաւ, քիւրտաբանտարկեալներ, որոնք կը տուայտին Յորդանանի, Մետուական Արաբիոյ, Եգիպտոսի եւ արաբական այլ բռնատիրութիւններու կալանավայրերուն մէջ կը շարունակեն մնալ քարնում քրթաժարներու մէջ:


ԿԵՒԱՐԱ ՇԷՅՆ ՆՈՒՐ – Քրտական «ԱՆՀԱ» գործակալութեան ռազմական թղթակից, խմբագիր, մեկնաբան – Հասաքէ:

«Ժեպիէթ Թահիր ըլ-Շամ» ահաբեկչական կազմակերպութեան ղեկավարը Ճոլանին (Ահմատ ըլ-Շարի) բաւականին խելացի, փորձուած, խիզախ ռազմա-քաղաքական գործիչ է, որ կարողացաւ համոզել ամերիկացիները եւ Արեւմուտքը՝ որոնք իր գլխուն համար 10 միլիոն տուլար խոստացած էին՝ զինք ֆինանսատրել, զինել, արտօնել Թուրքիոյ, որ ղեկավարէ այս յարձակումը Սուրիոյ վրայ եւ քանի մը օրէն տապալէ Ասատի 40 ամեայ փտած վարչակարգը: Այժմ իր տէրերը 3 ամիս ժամանակ տուած են իրեն, որպէսզի կազմէ հաւասարակշռուած կառավարութիւն մը, չվնասէ քրիստոնէայ եւ քիւրտ փոքրամասնութիւնները եւ դաւանի իբր թէ «Ժողովրդավարական» հիմունքներ եւ հասարակարգ: Շուտով, հիւսիս-արեւելեան Սուրիոյ քրտական թէ ասորական, հայկական ղեկավարները, որպէս «Սուրիոյ Դեմոկրատական Ուժեր», հրամանատար Մազլում Ապտիի գլխատրութեամբ, ֆրանսական եւ ամերիկեան միջամտութեամբ պիտի հանդիպին եւ բանակցին Ճոլանիի նոր վարչակարգին հետ, եթէ վերջինս կը ցանկայ որ «Կեսարի օրէնք» ծանր պատժամիջոցները վերացուին եւ օգնութիւն տրամադրուի Սուրիոյ տնտեսութիւնը վերականգնելու»:

Պէյրութ – Հալէպ – Ղամիշլի – Հասաքէ – Դամասկոս (հեռախօսով)


Մեր Արուեստագետները - 408

ԱՐՄԷՆ ՄԱՅԱՄԵԱՆ (ՄԱՅԱՐ)



Նկարիչ Սայամեան ծնած է Օգոստոս 8, 1996-ին Շուշի (Արցախ): Գեղանկարիչ բնատուր ձիրքերով, ուսանած է Շուշիի «Յակոբ Կիրճեան»ի անուան գեղարուեստի ուսումնարանը: Այնուհետեւ, ծառայած է ինքնապաշտպանութեան բանակի ջոկատներուն մէջ: 2016-ին մասնակցած է ապրիլեան պատերազմին: Արմէն մասնակցած է նաեւ Սեպտեմբեր 27, 2020-ի մարտական գործունէութեան, որմէ ետք, պատերազմի աւարտին, կորսնցնել է ետք իր ծննդավայրը եւ բնակարանը, կը տեղափոխուի ընտանիքին հետ Երեւան, հազարաւոր գաղթականներուն նման:

Ան կը գծէ 5 տարեկանէն սկսեալ: Հոգեպէս կապուած կը մնայ իր պապեանական հողին՝ Արցախին եւ կը շարունակէ ներշնչուիլ այս սրբազան միջավայրէն: Կը հաւատայ, որ օր մը անպայման Արցախը պիտի



վերադառնայ հայրենան որպէս անբաժան մէկ մասը հայոց հայրենիքին:



ՀԱՆԳԻՍ



Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութիւնը սրտի դառն կակիծով կը գուժեն Կիլիկեան Ուխտեալ Միաբանութեան երիտասարդ անդամներէն՝

Տ. ԱՆԱՆԻԱ Ծ. ՎՐԴ. ԳՈՒՃԱՆԵԱՆԻ (1982-2025)

վախճանումը, որ պատահեցաւ Շարաթ, 1 Փետրուար 2025-ի վաղ առաւօտեան, Պէյրութի (Լիբանան) մէջ:

Վերջին օժման ու թաղման կարգի մանրամասնութիւնները աւելի ուշ կը փոխանցենք:

ԴԻԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ